

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԲԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅԻ» ԷԶԵՐՈՒՄ

ԺԹ դարի վերջին քառորդին հայ բանագիտութիւնը նշա-
նաւորուեց մի ամբողջ շարք բանահիւսական ժողովածոնների
հրատարակութեամբ: Հրատարակի վրայ էին Մ. Միանսարեանցի,
Գ. Սրուանձտեանցի, Գ. Շերենցի, Յ. Ճանիկեանի, Տ. Նաւասար-
դեանի, Մ. Բարխուդարեանի, Գ. Տէր-Ալեքսանդրեանի եւ շատ
ուրիշների գրքերը: Հայ հասարակական միտքը ջերմութեամբ ու
խանդավառութեամբ ընդունեց վերոյիշեալ ժողովածոները եւ
յատկապէս ազգային հերոսավէպի՝ «Սասնայ ծռերի» երեւան գա-
լը: Վէպի նոր պատումների յայտնաբերումն ու տպագրութիւնը
խթան հանդիսացան նոր-նոր սկզբնաւորուող հայ բանագիտու-
թեան զարգացման համար: Բանահիւսութեան, ազգային հոգեւոր
արժէքների նկատմամբ արտայայտուած վերաբերմունքը ապա-
ցոյցն էր այն մտայնութեան, թէ որքան է կարեւորում հայ հա-
սարակութիւնը ազգային ժողովրդական մշակոյթը իբրեւ ազգա-
յին ինքնահաստատման ու յարատեւման գործօն: Վիեննայում
հանգրուանած Մխիթարեան միաբանութիւնը եւս ապրում էր իր
ազգի հոգսերով, անմասն չէր տեղի ունեցող հասարակական շար-
ժումներից:

1887 թ. լոյս է տեսնում «Հանդէս ամսօրեայ» պարբերակա-
նը: Խմբագրութիւնը հէնց առաջին իսկ տարուց իր պարբերա-
կանի էջերում զգալի տեղ է յատկացնում բանահիւսական հին
ու նոր յուշարձանների տպագրութեան, բազմակողմանի հետազօ-
տութեան խնդիրներին:

Բանահիւսութեանը վերաբերող նիւթերը, փոքր ու ծաւա-
լուն ուսումնասիրութիւնները հանդէսի էջերում ներկայացնում
են «Ազգային», «Ազգային ժողովրդական», «Ազգագրական» խո-

րագրերի ներքոյ: Բանահիւսուցիչներ ղրկուում էր իբրեւ ազգային, ազգագրական երեւոյթ լայն առումով. այն տրուում էր ծիսական, կենցաղային պատմական երեւոյթների հետ իբրեւ սինկրետիկ երեւոյթ: Այդ մօտեցմամբ էր առաջնորդուել նաեւ Եր. Լալայեանը՝ իր հիմնադրած պարբերականը անուանելով «Ազգագրական հանդէս», որի 26 գրքերը հարուստ են բանահիւսական բազմատեսակ նիւթերով:

«Հանդէս ամսօրեայի» լոյս ընծայած՝ բանահիւսուցիչներ վերաբերող նիւթերը ի մի բերելով կարեւրի է դրանք պայմանականօրէն խմբաւորել հետեւեալ կերպ. բուն բանահիւսական ստեղծագործութիւններ, ուսումնասիրութիւններ, ազգագրական-բանահիւսական հրատարակութիւնների մասին հաղորդումներ, արժէքաւորող-գնահատող գրախօսութիւններ:

Հանդէսի առաջին իսկ համարում տպագրուում է Խոտորջրի բարբառով գրի առած առածների մի փուկը¹: 1890-1895 թթ.² ընթացքում լոյս է տեսնում Տրապիզոնի հայոց վարժարանի ուսուցիչ Նշան Խոշեանի հաւաքածոն, բաղկացած շուրջ 700 միաւոր առած-ասացուածքներից, որն ամբողջութեամբ վերահրատարակեց Բարունակ Թոռլաքեանը իր կազմած «Նշխարներ Համշեհի եւ Տրապիզոնի բանահիւսութեան» գրքում (Երեւան, 1986):

1898-1900 թթ. «Լեզուաբանական» խորագրի ներքոյ հրատարակուում է Յովհաննէս Գազանճեանի «Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը» աշխատութիւնը³: Նոյնաբնոյթ աշխատութիւններ են նաեւ 1900-1903 թթ. լոյս տեսած Դաւիթ-Բէկի «Արաբկիրի գաւառաբարբառը»⁴ եւ 1908-1912 թթ. տպագրուած Մ. Գաբրիէլեանի «Ակնայ գաւառաբարբառը եւ հայերէն լեզուն»⁵:

1 «Համդէս ամսօրեայ», 1887, էջ 197-198:

2 Անդ., 1890, էջ 163-164, 289, 1891, էջ 116, 300-301, 1892, էջ 24, 183-184, 382-383, 1893, էջ 358-359, 1895, էջ 13:

3 Անդ., 1898, էջ 97-105, 146-147, 174-175, 208-210, 256-258, 298-306, 1899, էջ 11-14, 46-49, 145-147, 176-177, 207-210, 1900, էջ 336-341:

4 Անդ., 1900, էջ 248-252, 295-303, 328-332, 362-367, 1901, էջ 36-42, 175-177, 212-217, 235-238, 238_ 242, 1902, էջ 19-24, 48-53, 177-179, 219-224, 268-271, 326-330, 359-363, 393-396, 1903 էջ 47-49, 125-127, 218-220, 335-338:

5 Անդ., 1908, էջ 181-186, 207-212, 248-252, 279-288, 315-319, 344-350, 1909, էջ 54-61, 91-96, 120-124, 155-159, 190-192, 221-224, 252-256, 267-273 376-

Վերոյիշեալ աշխատութիւնների հեղինակները յընթացս ուսումնասիրութեան ներկայացնում են գաւառներում կենցաղավարող հէքիաթների, զրոյցների, աղօթքների, ծիսական ու կենցաղային երգերի, վիպական մանր ժանրերի, բանաձեւային-հմայական բանահիւսութեան, կոչականների դարձուածքների, փաղաքշանքի ու սպառնալիքի բազմաթիւ նմոյշներ:

Ըստ որում բոլոր պայմաններում բանահիւսական ստեղծագործութիւնները հեղինակները ներկայացնում են կենցաղավարման հանգամանքների հետ, լինեն դրանք ծիսական, կենցաղային թէ պատմական: Բանահիւսական նիւթի ընդգրկմամբ ու տեսակային բազմազանութեամբ յատկապէս շահեկանօրէն աչքի է ընկնում «Ակնայ գաւառաբարբառը»: Այս բարբառագիտական ուսումնասիրութեան շարունակութիւնը նուիրուած է Ակնայ եւ Գողթան երգերի տաղաչափական արուեստի իւրայատկութիւնների համեմատական վերլուծութեանը: Հանդէսի խմբագրութիւնը, կարծում ենք, ծանօթ էր Հ. Ճանիկեանի 1895 թ. լոյս տեսած «Հնութիւնք Ակնայ» ժողովածուին: Հրատարակելով Մ. Գաբրիէլեանի աշխատութիւնը՝ խմբագրութիւնն աւելի էր հարստացնում հայ ժողովրդական տոհմիկ երգի, բառ ու բանի այն ժառանգութիւնը, որ պահպանուել էր Ակնում:

Արգասաբեր է եղել Արամ Երեմեանի բանահաւաքչական գործունէութիւնը, որին հայ հասարակութիւնը, մասնաւորապէս բանագիտութեամբ պարապողները, ծանօթացել ու հաղորդակցուել են «Հանդէս ամսօրեայի» հրատարակութիւնների միջոցով: 1922 թ. ընթացքում լոյս է տեսել նրա աշխատասիրած «Չահարմահալի ժողովրդական բանահիւսութիւնը» յօդուածաշարը՝ «ազգագրական ուսումնասիրութիւն» անուամբ: «Չահարմահալի ժողովրդական բանահիւսութիւնը» բազմատեսակ ժողովածու է եւ ներկայացնում է Պարսկաստանի այդ հայաբնակ գաւառի աւանդական բանահիւսութեան գրեթէ բոլոր տեսակները՝ ազգագրական իրողութիւնների հետ:

379, 1910, էջ 91-93, 114-118, 234-238, 298-301, 343-347, 1911, էջ 103-109, 410-419, 585-595, 1912, էջ 15-38:

⁶ Անդ, 1922, էջ 33-39, 132-138, 255-268, 382-388, 452-460:

Հարկ է նշել, որ վերոբերեալ չորս աշխատութիւններն էլ Մխիթարեան միաբանութիւնը տպել է առանձին՝ «Ազգային մատենադարան» մատենաշարով:

1909-ին հանդէսը հրատարակում է Տ. Զիթունու գրի առած ազգային հերոսավէպի մի պատումը՝ «Մասմանց տուն, հայ ժողովրդական դիւցազնավէպի նոր «վարիանտ» (տարբերակ) կառկառու բարբառով», արեւմտահայ գրական փոխադրութեամբ հանդերձ: Զիթունին իբրեւ, բանահաւաք մի անգամ էլ է հանդէս գալիս պարբերականի էջերում: Նրա՝ 1906 թ. վանում գրի առած «Քառասուն դիւղեր եւ թակաւուրու ախչիկ» ժողովրդական հէքիաթը լոյս է տեսել աւելի ուշ՝ 1932 թ.⁸:

Ի դարի 20-ական թուականներից սկսած հանդէսի էջերում հետզհետէ նուազում է բանահիւսական նիւթերի քանակը: Փոխւում է նաեւ լոյս տեսածների բնոյթը: Հաւանաբար ազգային աղէտը, բանահիւսութեան սնուցող հողի՝ բնաշխարհի կորուստը, քաղաքական հանգամանքները որոշակի բացասական անդրադարձներ ունեցան այս խնդրում: Եւ այնուամենայնիւ 30-40-ական թուականներին բանահիւսութիւնը շարունակում էր մնալ «Հանդէսի» տեսադաշտում:

1928 թ. հրատարակում է Ա. Երեմեանի յաջորդ հաւաքածուն՝ «Փշրանքներ հայ ժողովրդական բանահիւսութիւնից» խորագրով, որը պարունակում է պատառիկներ Մարգուանի, Բայագետի, Շիրակի, Ալաշկերտի հայ ժողովրդի բանարուեստից: Նոյն տարում լոյս է տեսնում Կ. Մելիք-Շահնազարեանի (գրական շրջաններում յայտնի «Տմբլաչի-Խաչան» կեղծանունով) բանահիւսական հաւաքածուի մի մասը՝ «Ղարաբաղի բարքերէն» վերնագրով, որը ներկայացնում է օրհնութեան ու անէծքի նմոյշների մի փունջ¹⁰: Հանդէսը շարունակում է տպագրուել Ա. Երեմեանի հաւաքածուն. 1930 թ. «Փշրանքներ ջուղահայ եւ հնդկահայ բանահիւսութիւնից»¹¹ բաժինը, որն ընդգրկում է մայր հողից կտրուած երկու գաղթավայրերում տակաւին կենդանի կենցաղա-

7 Անդ, 1909, էջ 111-118, 186-190, 212-216, 274-279:

8 Անդ, 1932, էջ 614-624:

9 Անդ, 1928, էջ 536-552:

10 Անդ, էջ 552-559:

11 Անդ, 1930, էջ 346-356, 435-444, 685-695:

վարող սիրոյ, հարսանեկան, երգիծական եւ այլ տաղերի ու երգերի նմոյշներ: Մելիք-Շահնազարեանի «Առականեր Ղարաբաղի բարբառով» նիւթը նրա հաւաքածուի շարունակութիւնն է, եւ ներկայացուում են ոչ թէ առականեր, ինչպէս վերնագրուած է, այլ ասածներ, 105 միաւոր¹², եւ ապա՝ «Հանելուկներ Ղարաբաղի լեզուով»¹³, 145 միաւոր: Աւելորդ չենք համարում նշել, որ նոյն հեղինակի ազգագրական բնոյթի նիւթերը եւս, մասնաւորապէս բուրդ գգելու, գորգ գործելու, ժողովրդական բժշկութեան վերաբերեալ, տեղ են գտել հանդէսի էջերում¹⁴:

1924-1927 թթ. բանագէտ Ա. Երեմեանը հանդէս է գալիս մի այլ ժողովրդական բանահիւսութեանը յարող բնագաւառում: Նրա ծաւալուն աշխատութիւնը՝ «Պարսկահայ նորագոյն աշուղներ, կենսագրութիւններ եւ բնագրեր», լոյս են տեսնում ինչպէս հանդէսում¹⁵, այնպէս էլ առանձին գրքով՝ «Ազգային մատենադարան» մատենաշարով: Բանահաւաքը շարունակում է պրպտումները եւ ահա ներկայացնում է մի աշխատանք, ուր ընդգրկուած են չիրմաքարերի մակագրութիւնները, եւ որոնց նա յիրաւի դիտարկում է իբրեւ ժողովրդական ստեղծագործութիւններ: Նրա «Թիֆլիսի հայկական պանթէոններում»-ը տպագրուել է հանդէսի 1937-1940 թթ. համարներում¹⁶: 30-ական թուականներին հանդէսը տպագրում է մի քանի բանահիւսական ստեղծագործութիւններ, փոքրածաւալ հաւաքածու, որոնք թէեւ արժէքաւոր, բայց վկայութիւնն էին բուն նիւթի նուազեցման եւ ոչ՝ հանդէսի վերաբերմունքի փոփոխութեան: Այսպէս, 1932-ին Ն. Ակինեանը հրատարակում է «Երեք հարսանեկան տաղեր, հին ժողովրդական բանահիւսութենէն», որոնք նա յայտնաբերել էր կաֆայում 1620 թ. գրուած մի տաղարանում¹⁷:

¹² Անդ, էջ 357-362:

¹³ Անդ, էջ 596-601:

¹⁴ Անդ, 1928, էջ 475-478, 1931, էջ 246-252, 1932, էջ 331-337:

¹⁵ Անդ, 1924, էջ 102-111, 234-244, 312-318, 499-509, 1926, էջ 148-152, 229-235, 324-333, 1927, էջ 138-141:

¹⁶ Անդ, 1937, էջ 359-378, 1938, էջ 116-126, 230-238, 402-416, 1939, էջ 115-123, 1940, էջ 121-128:

¹⁷ Անդ, 1932, էջ 223-227:

1933 թ. լոյս է տեսնում Ն. Ակինեանի «Քաջն Լիպարիտի պատմութեան, տաղերու եւ գրոյցներու մէջ» ուսումնասիրութիւնը՝ Լիպարիտին ձօնուած երգերի՝ եւ պատմական գրոյցների հետ¹⁸: Լիպարիտի կերպարին ու նրա անուանն աղերսուող պատմութեանը նա անդրադառնում է նաեւ յետագայում¹⁹, եւ այս կապակցութեամբ ուշագրաւ է նրա հետեւեալ միտքը. «Թէ՛ պատմական յիշատակներն, եւ թէ՛ գրուցախառն պատմուածքները արժանի են ուշադրութեան. վերջիններս կը բանան մեր առջեւ նոր էջ մը հայ դիւցազներգական գրականութեան»²⁰: 1937 թ. հրատարակում է Հ. Գ. Մոսկոֆեանի «Նմոյշներ Սեբաստիոյ ժողովրդական բանահիւսութենէն» խորագրով հաւաքածուն՝ բաղկացած աղօթքներից ու տարբեր տեսակի երգերից:

Յետագայ տասնամեակում եւս եղան հատուկէնտ բանահիւսական ստեղծագործութիւնների հրատարակումներ: Առաւել արժէքաւորն ու ծաւալունը Տիգրան Աբգարեանի ազգագրական-բանահիւսական բնոյթի աշխատութիւնն է, որը լոյս է տեսել 1964-1966 թթ. «Ընտանեկան բարք Նոր Զուղայի», «Հաւատալիքներ Նոր Զուղայի մէջ» եւ «Նոր Զուղայի ստածները» վերնագրերով: Դրանք ընդգրկում են Նոր Զուղայի բանահիւսութեան տարբեր տեսակների, մասնաւորապէս տաղերի, երգերի, ասածների, անէծք-օրհնանքների մի շարք նմոյշներ²¹: Եւ ապա Պօղոս Էսապալեանի «Հարսանեկան թագաւորը» ազգագրական ուսումնասիրութիւնը, որի էջերում ըստ հարկի մէջ են բերւում հարսանիքի ժամանակ գործածուող բանաձեւերը²²:

«Հանդէս ամսօրեայի» էջերում լոյս են տեսել բանագիտական մի շարք մեծ ու փոքր աշխատութիւններ՝ նուիրուած բանահիւսական ազգագրական իրողութիւնների, երեւոյթների ու սոսնձասիրութեանը: Առաջին իսկ համարներից «Ազգագրական» խորագրով հրատարակում է Ղ. Յովնանեանի «Մեր առակաց՝ հնդկականաց հետ յարաբերութիւնն. համեմատական ուսումնասի-

18 Անդ, 1933, էջ 129-138:

19 Անդ, 1965, էջ 20-32:

20 Անդ, էջ 129:

21 Անդ, 1964, էջ 245-256, 405-414, 515-528, 549-554, 1965, էջ 111-120, 285-290, 395-404, 1966, էջ 93-100:

22 Անդ, 1944, էջ 36-56:

րութիւնը»²³: Գրաւոր աւանդոյթով յայտնի առակների հետ հեղինակը վկայակոչում է նաեւ ժողովրդական ստեղծագործութիւնները: Բանագիտական որոշակի հետաքրքրութիւն է ներկայացնում հեղինակի «Միջնադարեան ազգային տաղաչափութիւնն ուսմկախառն. ուսումնասիրութիւն եւ կարեւոր տաղերու հրատարակութիւն» աշխատութիւնը²⁴, որը մնաց անաւարտ՝ հեղինակի մահուան պատճառով:

Վէպի նորանոր պատումների ի յայտ գալը անհրաժեշտաբար առաջացրեց այն բազմակողմանիօրէն հետազօտելու ու արժէքաւորելու խնդիրը: Վէպի ազգային, պատմական ու առասպելական կողմերի քննարկմանն է նուիրուած Բազրատ Խալաթեանի «Հայ ժողովրդական դիւցազնական վէպը» աշխատութիւնը, որը լոյս տեսաւ հանդէսի 1902 թ. համարներում²⁵ եւ ապա առանձին՝ «Ազգային մատենադարան» մատենաշարով: Տ. Զիթունու «Համեմատական, ազգագրական հետազօտութիւնը Անահիտ-Արեւ-Աստղիկ եւ հայ ժողովրդական վէպի Դեղձունծամ-Գոհարը» հրատարակուել է 1911 թ.²⁶:

1920-ական թուականների «Հանդէս ամսօրեան» աչքի է ընկնում բանագիտական խոշոր ու մանր աշխատութիւնների առատութեամբ: Յատկապէս ուշագրաւ են Ալեքսանդր Մատիկեանի «Արա Գեղեցիկ» քննական ուսումնասիրութիւնը, որը լոյս է տեսել 1922-1930 թթ. ընթացքում²⁷, եւ Թ. Աւդալբեգեանի «Միհրը հայոց մէջ» ուսումնասիրութիւնը, որն առաջին անգամ տպագրուել է «Ամսօրեայի» էջերում 1927-1928 թթ. ընթացքում²⁸: Երկու աշխատութիւններն էլ արժանացել են առանձին տպագրութեան «Ազգային մատենադարան» մատենաշարով: Թուրքական հետազօտութիւնները իհարկէ կարելի է բնութա-

²³ Անդ., 1891, էջ 175-178, 210-214, 295-300, 329-333:

²⁴ Անդ., 1895, էջ 305-310, 1896, էջ 52-55, 115-119:

²⁵ Անդ., 1902, էջ 132-136, 173-177, 252-256, 330-333, 349-354:

²⁶ Անդ., 1911, էջ 169-172:

²⁷ Անդ., 1922, էջ 111-121, 226-243, 556-563, 631-642, 1923, էջ 116-131, 481-496, 1926, էջ 152-161, 1927, էջ 43-55, 145-162, 317-325, 1928, էջ 224-241, 319-325, 1929, էջ 129-142, 1930, էջ 61-77, 164-181:

²⁸ Անդ., 1927, էջ 442-453, 589-600, 1928, էջ 38-44, 146-157, 242-257, 325-337, 411-428, 494-505:

գրել իբրեւ բանագիտական վերապահութեամբ. հեղինակներն իրենք իրենց գործերն անուանում են պատմական, դիցաբանական, ազգագրական համեմատական ուսումնասիրութիւն:

«Հանդէս ամսօրեան» իր էջերում մեծ տեղ է յատկացրել հայերէն եւ հայերին վերաբերող հրատարակութիւններին եւ ի շարս դրանց բանահիւսական-ազգագրական բնոյթի գրքերին: Ամսագիրը պարբերաբար տպագրել է հաղորդումներ այդ հրատարակութիւնների տեղի, ժամանակի, հեղինակների մասին՝ յաճախ ներկայացնելով դրանց համառօտ բովանդակութիւնը, գրախօսել ու արժէքաւորել դրանք: 1887 թ. հանդէսը ծանուցում է Գր. Խալաթեանի «Ծրագիր հայ ազգագրութեան եւ ազգային իրաւաբանական սովորութիւնների» նոյն թուականին Մոսկովայում տպագրուած յիշուած ծրագրային աշխատութեան մասին²⁹: Այնուհետեւ ծանուցում եւ գրախօսում են մասամբ «Ազգագրական հանդէսի» համարները³⁰, «Էմիլեան ազգագրական ժողովածուն»³¹, Գր. Խալաթեանի «Հայկական էպոսը Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան մէջ» ուղևերէն աշխատութիւնը³², «Բանասէր» հանդէսի համարները³³: Գ. Շերենցի «Վանա սագը» (Բ գիրք)³⁴, Տ. Նաւասարդեանի «Բառգիրք Արարատեան բարբառին»³⁵, Մաթ. Հաճեանի «Հին աւանդական հէքիաթներ Խոտորջրոյ»³⁶ ժողովածուն, Վ. Համբարձումեանի «Գիւղաշխարհը»³⁷, Տրդ. եպս. Պալեանի «Հայ աշուղներ, ժողովրդական հայ երգիչներ եւ տաղասացըր»³⁸ երկու հատորները, «Սասնայ ծռերի» Ա հատորը³⁹, Տ. Զիթունու Փարիզում 1943 թ. հրատարակած «Սա-

29 Անդ., 1887, էջ 10:

30 Անդ., 1896, էջ 152-154, 1899, էջ 86, 1900, էջ 24-26, 182-183:

31 Անդ., 1909, էջ 350-351:

32 Անդ., 1897, էջ 218:

33 Անդ., 1899, էջ 153-155, 316-317, 1900, էջ 23-24, 180-182, 316-317:

34 Անդ., 1900, էջ 121-122:

35 Անդ., 1903, էջ 382:

36 Անդ., 1907, էջ 256:

37 Անդ., 1928, էջ 94:

38 Անդ., 1911, էջ 760-763: 1914, էջ 362-364:

39 Անդ., 1936, էջ 408-410:

սունականը»⁴⁰, Ս. Ամատունու 1912 թ. լոյս տեսած «Հայոց բառու բանը»⁴¹, կարեւրի է շարունակել թուարկումը, սակայն կարծում ենք, այսքանն էլ բաւական է:

Մեզ հետաքրքրող խնդրի կապակցութեամբ յիշատակութեան են արժանի երկու փաստ, որոնք վկայում են պարբերականի խմբագրութեան կողմնորոշումների մասին: Հանդէսի էջերում մշտապէս տեղ են գտել հայ երեւելի անհատներին նուիրուած մահախօսականներ: Այդ շարքում առանձնանում է 1931-ին վախճանուած նշանաւոր ազգագրագէտ, խմբագիր, բանահաւաք Երուանդ Լալայեանի մահախօսականը՝ նրա աշխատութիւնների մատենագիտութեամբ հանդերձ, որն աչքի է ընկնում Եր. Լալայեանի գիտական վաստակի ու նշանակութեան ըստ արժանւոյն գնահատմամբ⁴²: 1931 թ. 6-րդ համարում խմբագրութիւնը հանդէս է եկել Արտաշէս Աբեղեանի Ազգագրական ընկերութիւն եւ Ազգագրական հանդէս ստեղծելու առաջարկութեան պաշտպանութեամբ եւ այդ առթիւ գրել է այսօր էլ իր հրատապութիւնը չկորցրած հետեւեալ տողերը. «Ինչ որ զանց կ'ընէք այսօր, զուր պիտի փնտռենք վաղը: Փրկենք այսօրուանը: Համախմբուինք, ձեռք ձեռքի տանք եւ հանենք մշակներ հայ ազգագրութեան դաշտ, որովհետեւ հունձք բազում են եւ մշակք սակաւք՝ հաւաքելու, ամբարելու գիտութեան շտեմարանը այն տոհմականները, որ հասցուցած է հայ անդաստանը: Երկինքը մառախլապատ է. կարող է կարկուտը ոչնչացնել հունձքը: Ոչ մէկ զոհողութիւն զուր պիտի չանցնի, հունձքը գիտութեան պիտի մնայ, ստացուածքը՝ հայ ժողովրդոյն»⁴³:

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԵԱՆ

40 Անդ, 1949, էջ 121-123:

41 Անդ, 1914, էջ 124-126:

42 Աճդ, 1931, էջ 291-303:

43 Աճդ, 1931, էջ 380: